ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ
ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ
ԱՐԱԲԿԻՐ ՆՍՏԱՎԱՅՐ
(ՀՀ, համայնք ԵՐԵՎԱՆ, ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ, ՀՐ. ՆԵՐՍԻՍՅԱՆ Փ., մասնաշենք 10)

*Սույն փաստաթղթի իսկությունը հնարավոր է ստուգել https://verify.e-gov.am կայք ում մուտքագրելով IEA8-A053-4607-8698 հսկիչ համարը կամ սքանավորելով QR կոդը։*

# ՈՐՈՇՈՒՄ

## ՀԱՅՑԱԴԻՄՈՒՄԸ ՎԱՐՈՒՅԹ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ, ԱՊԱՑՈՒՅՑՆԵՐ ՊԱՀԱՆՋԵԼՈՒ, ԳՈՐԾԸ ԳՐԱՎՈՐ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ՔՆՆԵԼՈՒ ԵՎ ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴԱՏԱԿԱՆ ԱԿՏԻ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ՕՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԵԴ2/13077/02/25 ք. Երևան
15 Դեկտեմբերի 2025թ

Հայաստանի Հանրապետության Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի դատավոր Ա. Դունամայյանը, քննարկելով «ԱՐՄԵՆ-ՇԻՆ» ՍՊ ընկերության, «ԱՐԱՄԵ» ՍՊ ընկերության և «ՎԵՐԱԾՆՈՒՆԴ 7» ՍՊ ընկերության ընդդեմ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի՝ հայցվորներին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ՀՀ քաղաքաշինության կոմիտեի գլխավոր քարտուղարի 13.11.2025 թվականի թիվ 08-2025 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, հայցադիմումը վարույթ ընդունելու, պատասխանողից ապացույցներ պահանջելու և եզրափակիչ դատական ակտի հրապարակման օրը նշանակելու հարցերը,

## ՊԱՐԶԵՑ

հայցվորի ներկայացուցիչը 08.12.2025 թվականին էլեկտրոնային համակարգի միջոցով այսուհետ նաև՝ Համակարգ հայցադիմում է ներկայացրել Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարան (այսուհետ՝ Դատարան) ընդդեմ պատասխանող ՀՀ քաղաքաշինության կոմիտեի՝ հայցվորներին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ՀՀ

քաղաքաշինության կոմիտեի գլխավոր քարտուղարի 13.11.2025 թվականի թիվ 08-2025 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին:
Ներկայացված հայցադիմումը 24.09.2025 թվականին մակագրվել է դատավոր Ա. Աթանեսյանին:
Դատավոր Ա. Աթանեսյանի 09.12.2025 թվականի զեկուցագրի հիման վրա հայցադիմումը 09.12.2025 թվականին վերամակագրվել է դատավոր Ա. Դունամալյանին և Համակարգի միջոցով հասանելի է դարձել 10.12.2025 թվականին:
I. Ուսումնասիրելով հայցադիմումը և դրան կից ներկայացված փաստաթղթերը՝ Դատարանը կարծում է, որ հայցադիմումը ներկայացվել է ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված պահանջների պահպանմամբ և առկա չեն նույն օրենսգրքի 126-րդ և 127-րդ հոդվածներով սահմանված հայցադիմումի ընդունումը մերժելու կամ այն վերադարձնելու հիմքերը:
II. Հաշվի առնելով, որ հայցադիմումն ենթակա է վարույթ ընդունման, Դատարանը հարկ է համարում ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն ՀՀ առողջապահության նախարարությունից պահանջել ՀՀՔԿ-ՀԲՄԱԾՁԲ-25/28 ծածկագրով գնման գործընթացի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները:
III. Ելնելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 234.9-րդ հոդվածի 1-ին մասի կարգավորումներից և հայցի հիմքում դրված փաստերի առանձնահատկություններից՝ Դատարանը կարծում է, որ գործի քննությունը պետք է իրականացնել գրավոր ընթացակարգով:
IV. Դատարանը, հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 124-րդ, 125-րդ, 199-րդ, 200-րդ, 234.5-րդ և 234.9-րդ հոդվածներով,

## ՈՐՈՇԵՑ

1. «ԱՐՄԵՆ-ՇԻՆ» ՍՊ ընկերության, «ԱՐԱՄԵ» ՍՊ ընկերության և «ՎԵՐԱԾՆՈՒՆԴ 7» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի՝ հայցվորներին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ՀՀ քաղաքաշինության կոմիտեի գլխավոր քարտուղարի 13.11.2025 թվականի թիվ 08-2025 որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին, ընդունել վարույթ:
2. ՀՀ առողջապահության նախարարությունից պահանջել ՀՀՔԿ-ՀԲՄԱԾՁԲ-25/28 ծածկագրով գնման գործընթացի հետ կապված իր տիրապետման տակ գտնվող բոլոր ապացույցները,
3. որոշումը՝ ապացույցներ պահանջելու մասով, պատասխանողի կողմից ենթակա է կատարման որոշումը ստանալուց հետո՝ հնգօրյա ժամկետում
4. եզրափակիչ դատական ակտը հրապարակել 2026 թվականի հունվարի 30-ին՝ ՀՀ դատական իշխանության պաշտոնական կայքի միջոցով:
5. Գործի քննություն իրականացնել գրավոր ընթացակարգով:
6. Պատասխանողին պարզաբանել, որ վիճարկվող գործողությունների (անգործության) և որոշումների հիմքում ընկած հանգամանքների, ինչպես նաև տվյալ գործողությունների (անգործության) կատարման և որոշման ընդունման օրենքով, այլ իրավական ակտերով սահմանված կարգը պահպանված լինելու փաստերն ապացուցելու պարտականությունը

կրում է նա, իսկ վիճարկվող գործողությունների (անգործության) և որոշումների իրավաչափությունը հիմնավորող ապացույցներ կարող է ներկայացվել միայն ապացույցները պահանջելու որոշման կատարման ընթացքում, բացառությամբ այն դեպքերի, երբ հիմնավորում է ապացույցի ներկայացման անհնարինությունը իրենից անկախ պատճառներով:

7. Որոշումն ուղարկելու հետ միաժամանակ պատասխանողին տեղեկացնել հայցադիմումի պատասխան ներկայացնելու իրավունքի և ժամկետի մասին:

8. Որոշումն ուժի մեջ է մտնում կայացման պահից և ենթակա չէ բողոքարկման:

**Դատավոր՝ Ազատ Դունամալյան**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԴՈՒՆԱՄԱԼՅԱՆԻ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄԻՆ

---

*Տվյալ ֆայլերին կարող եք ծանոթանալ նաև մուտք գործելով "Էլեկտրոնային դատավարություն" համակարգ՝ cabinet.armlex.am*